ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2024 թվականի № 403-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5–րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 7-ի № 37-Ն և 2024 թվականի սեպտեմբերի 18-ի № 1787-Ա/2 հրամանները՝ **որոշում եմ.**

1. «Տարվա լավագույնները» մրցույթի անցկացման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով .

1) ***Համիկ Մակարյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ,

2) ***Նարե Ստեփանյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ,

3) ***Անահիտ Մայյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Մեղրաձորի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ,

4) ***Լիլիթ Սահակյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Բջնիի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ *(համաձայնությամբ)*,

5) ***Մերի Հարությունյան*** - հանձնաժողովի անդամ, Հրազդան քաղաքի «Հրազդանի № 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գծով փոխտնօրեն *(համաձայնությամբ)*:

2. Հանձնաժողովին՝ ղեկավարվել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 7-ի «ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի № 1354-Ն հրամանը ուժը կորցրած

ճանաչելու և «Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերը, դրանց պահանջները և անցկացման կարգը հաստատելու մասին» № 37-Ն հրամանի պահանջներով:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի փետրվարի 7-ի *«Հանձնաժողով ստեղծելու մասին»* № 56-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2024 թվականի հոկտեմբերի 10
ք. Հրազդան